



## ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՎՈՐ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ԸԱՔԱԹ 10 ՄԱՐՏԻ 1862

ԹԻԻ 670

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԻԱ, 10 ՄԱՐՏԻ

Վաղղիյ ծերակուտի ժողովոյն մէջ նստութիւն եւ լի կրիւք վիճաբանութիւններ եղան ի վերայ քաղաքական զանազան խնդրոց եւ մասնաւորապէս Հռոմի խնդրոյն վրայ: Երկու ընդդիմադիր կուսակցութեանց, այսինքն ազատականաց եւ կղերականաց ատենաբանները շատ տաքութեամբ եւ չափէն աւելի խոստիւ խօսեցան: Նաբոլէոն իշխանը, որ ազատասէր կուսակցութեանը կը վերաբերի, մեծ խմատութեամբ պաշտպանեց կառավարութեան ընթացքը: Սակայն կղերականաց կուսակցութիւնը բաւական զօրաւոր ըլլալով ծերակուտի ժողովոյն մէջ ինչպէս նաեւ բոլոր Վաղղիյ մէջ, Նաբոլէոն կայսրը քանի մը վերջապէս ըրաւ ի շնորհս կղերականաց: Օրինակի համար, Վաղղիյ թագաւորական դպրոցին մէջ երթողներէն ընդունի դասատու մօտիկ լինելու Ռէնան գիտնականը իւր պաշտօնէն զրկուեցաւ, Վրիտանիոյ Մատու ծովային վրայօր երկրաչափական կերպիւ խօսելուն համար դասատուութեան ժամանակը: Անոր զուգահեռ խօսքերը ներկայ Վաղղիական յօդուածոյս վերջը պիտի գնեմք գոհ ընելու համար մեր ընթերցողաց հետաքրքրութիւնը, որ բնական է այսպիսի պարագայի մը մէջ:

Դասատուութիւնը վերջանալէ ետեւ, քանի մը հազար ուսանողք մօտիկ Ռէնանին տանը առջև երթալով աղաղակեցին, ինչպէ՜ Ռէնան, ինչպէ՜ Ռէնան: Այս վերջին խօսքը աւելի բարձր եւ հաստատ ձայնիւ աղաղակեցին ծերակուտի պալատին առջև:

Հատ բանտարկութիւններ եղան Փարիզի մէջ, ազատասիրաց չափազանց եռանդը եւ անոնց հրապարակական անկարգ ցոյցերը զսպելու համար: Երազարութեանց եւ սաստիկ պատուէրներ տրուեցան որ խոհեմութիւնը ձեռքէ ձգեն եւ խուլալոյց յօդուածներ չգրեն, եթէ չեն ուզեր որ պատժուին ըստ օրինաց: Փարիզի

Օրինակ Նաբոլէոն կոչուած օրագրութիւնը յանդիմանութիւն ընկալաւ ի կառավարութենէն իւր քանի մը խիստ յօգուածոցը համար: Ուստի յիշեալ թերթին գլխաւոր խմբագիր մօտիկ տը կերու, որ կառավարութեան դէմ ուրիշ խիստ յօգուած մը պատրաստած էր, խոհեմութիւն համարեցաւ հրատարակել զայն: Այս յօդուածոյն թարգմանութիւնը եւ քիչ մը հետո մեր յարգոյ ընթերցողաց աչաց առջև կը դնեմք ի տնդեկութիւն իւրեանց:

Վաղղիյ լրագրութեանց մեծագոյն մասը շատ գովութեամբ կը հռչակեն բարձրադատիկ Նաբոլէոն իշխանին՝ ծերակուտին մէջ ըրած ատենաբանութիւնը հռոմէական խնդրոյն վրայօր: Այս պատուական ատենախօսութեամբ կայսերազուն իշխանը յայտնի կերպիւ եւ խմատութեւ հետեցուց թէ Վաղղիական պէտք է որ, զինի աւան հնարաւոր ապահովութիւնները դաշնադրելու ինչպստ հոգեւոր անկախութեան սրբազան Վաղղի իւր զօրքը ետ կանչէ Հռոմէն եւ թող տայ որ իտալիան հաստատուի եւ յառաջ երթայ:

Ի պատճառս հռոմէական ծանր ու դժուար խնդրոյն, ժամանակէ մի ի վեր տեսակ մի խռովութիւն եւ գրգռիչ շարժում կը տեսնուին Փարիզի մէջ: Այս բանին վրայօր Միլիթօր անուն պաշտօնական օրագիրը այսպէս կը գրէ.

«Կառավարութիւնը ժամանակէ մի հետեւ ու շարժութիւն կը մատուցանէր պատժապարտ յուզմանց հետքը գտնելու եւ այժմ գլխաւոր խռովոյցները ձեռք ձգեց եւ անոնց դատաստանը կը տեսնուի»:

Իտալիայ պաշտօնէից ժողովը, որուն նախագահ էր Ռիբարդի սեպուհը, իւր հրաժեշտը տուաւ, եւ պաշտօնէից նոր ժողով մի հաստատուեցաւ նախագահութեամբ փաստաբան Ռադացցի ատղետին, որ երեսփոխանաց խորհրդանոցին նախագահ էր:

Մօտիկ Ռադացցիին յանձնառու եղաւ միանգամայն արտաքին դժոճոց պաշտօնէն: Պատե-

րագրի տեսչութիւնը Նիզիդիի Պալլանի կոմսին յանձնուեցաւ, ծովային զօրութեանց տեսչութիւնը Նիքրասոն ծովայեալին, եկամտից տեսչութիւնը Սելա ասպետին, արքարութեան եւ կրօնից պաշտօնը Վորտոֆա ասպետին եւայլն:

Ընտանի ազատասիրական օրագրութիւնները կը ցաւին պաշտօնէից նախորդ ժողովոյն հրաժարմանը վերայ. քանզի այս հրաժեշտը վնասակար է, կըսեն, իտալիայ օգտիցը: Վայց ընդհակառակն կերեւի թէ Վաղղիյ մէջ հաճութեւ ընդունուեցաւ այս փոփոխութեան լուրը:

Վերիկայէն հասած լուրերը միշտ օգտակար են հիւսիսային հասարակապետութեան համար: Որուն զօրաբանակը Փետրուարի 4-16ին նոր յաղթութիւն մի ըրաւ հարաւային զօրաց վերայ: Կը հաստատեն թէ անոնցմէ 15 հազար հոգի կալանաւոր ինկեր են հիւսիսային զօրաց ձեռքը: Որոնք թշնամոյն բաղմամբ պատե-րագրական պաշարացը եւ տիրեն են:

Յունաստանի ուստամբութիւնը, որ ի սկզբան թեթեւ բան մի կերեւէր, երթալով կը ծանրանայ եւ ժողովրդեան մէջ մասը դժգոհ ըլլալով թագաւորէն եւ անոր կառավարութենէն, ապստամբաց հետ միաբանելու հակամիտութիւն կը ցուցնեն: Սիրայի բերդապահ զօրքը ոտք եւլաւ եւ տեղական կառավարութեան անդամները ամենքն ալ բանտարկեց: Այս կղզւոյն աղբային ժողովը ապստամբ զօրաց ըրածին հաւանութիւ տալով՝ առժամանակեայ կառավարութիւն մի հաստատեց հասարակաց անդորրութիւնը անվնաս պահելու համար:

Յունաստանի մէջ ապստամբական ոգւոյն այս պէս տարածուիլը ցաւալի է անշուշտ: Վասնզի զանազան անկարգութեանց եւ արիւնահեղութեւ պատճառ կրնայ ըլլալ, առանց երբեք յաջող ելք մը ունենալու: Ըստորում հելլենական կառավարութիւնը, ըստ հասարակաց կարծեաց, բաւական զօրութիւ ունի ապստամբները զսպելու շուտ կամ ուշ: Իսկ եթէ օգնութեան հար-

#### ՔԱՂԱՔԱՎՈՐ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

(Հարուստութիւն եւ վերջապէս)

Ի միջոցի ձեռնադրութեան բողոքագրոյս՝ ընելի լինելով զի թուղթ մի ի սրբազան Առաջնորդէ մերմէ ճուղայու հասեալէ առ յարգելի եկեղեցւոյն մեր աստ, ներքոյ յիշատակեալ խնդիրն մատուցաւ նմա. որոյ պատասխանն ի ներքոյ նմին երեւեցի թէ թուղթն այն սրբազան Առաջնորդին՝ ոչ է վերաբերելի հասարակութեան մերադնէից տեղոյս:

Առ արժանապատիւ պարոն Կ. Յ. Վրդանիսեան, եկեղեցւոյն Կալիթայոյ եւ Չիլոյ սուրբ եկեղեցւոյն շայոյ:

Արժանապատիւ պարոն.

Եւ եւալ եմք թէ քանի աւուրք յառաջ հասեալ է ձեզ թուղթ մի՝ գրեալ ի սրբազան Թագաւորէ առաջնորդէն ճուղայու, վերաբերելի աւագերիցու մերոյ եւ հասարակութեան. այլ արտօմք յոյժ զի թուղթն այն մինչ ցարդ ոչ է ածեալ ի յայտ պատուելի հասարակութեան մերում ի անդեկութիւն ի մատուցն ի նմին պարունակելոյ. վասնորոյ սովաւ ինդքեմք ի ձեռք (եթէ ստոյգ իցէ բանն) կոչել զհասարակութիւն մերադնէից ի ժողով, ի ստորին սրահ շինուածոյ լազարէթայ սուրբ եկեղեցւոյ մերոյ, յաւուր առաջիկայ կիւրակէի, ի մտասաներորդ

(ԻՅնա լրագրոյս նախընթաց թիւը:

Ժամու Ն. Ս. առ ի ներկայացուցանել եւ ընթեռնուլ զթուղթն ի ձայն եւ ի լուր ամենեցուն անդր ժողովեաց: Եւ եթէ իցէ խնդիր ինչ ի նմին զայն մանէ ըստ պատշաճին առարկել:

Յարգանք մնամք:

Ի Կալիթայ, 23 դեկտեմբեր 1861:

(Ձեռն. Ա. Բ. Ե. Ա.)

Բաղդասար Լ. տէր Գասպարեան:

Խաչիկ Յ. Ալեքան:

Ռ. Ս. Շիրիսոեան:

Մանուկ Թորոսեան:

Մարտիրոս Յ. Բամալեան:

Գ. Ռ. Շիրիսոեան:

Գեորգ Բեւեռեան:

Ծատուր Ս. Բիշանեան:

Մարտիրոս Ս. Թորոսեան:

Յարութիւն Ս. Բիշանեան:

Գալստան Մանուկեան:

Մեքսիկ Թագաւորեան:

Գեորգ Պետրոսեան:

Ալեքա Պետրոսեան:

Խ. Յ. տէր Գ. Ուկասեան:

Ջ. Նիկոլայ Մալխասեան:

Յ. Լ. Միքայէլեան:

Խ. Թ. Աւետուհեան:

Մանուկ Ե. Մանուկեան:

Յարութիւն Կարապետեան:

Պողոս Կարապետեան:

Յ. Ռ. Չ. Շիրիսոեան:

Յ. Ն. Միքայէլեան:

Լ. Ս. Պալեան:

Յովսէփ Ստեփաննոսեան:

Կարապետ Պ. Կարապետեան:

Առ դերասպտիկ պարոնայք Բաղդասար Լ. տէր Գասպարեան, խ. Յ. Ալեքա, Ռ. Չ. Շիրիսոեան, Մանուկ Թորոսեան, եւայլն եւայլն:

Թանգ պարոնայք,

Ի պատասխանի գրութեան ձեռում խնդրեմ ծանուցանել զի սրբազան Առաջնորդի թուղթն ոչ հայեալս առանձին առ հասարակութիւն մերադնէից, եւ ոչ պատուիրեալեմք ի նմանէ զառարկայ թղթոյն հրատարակել. վասնորոյ մեր չկարեմք ժողով կոչել. այլ որ ինչ Սրբազանի պատուէրն է առ այն՝ զայն ունիմք կատարել. բայց եթէ դուք ի խնդիր ելա՞նէք առ սրբազան Առաջնորդն վասն հրատարակելոյ սոյն զիրն, եւ եթէ մեր արձակութիւն գտանեմք ի նմանէ վասն այդ, յայնժամ ամենայն յօժարութեւ ունիմք այնպէս առնել. Մնամ:

Յաւանդատան Նաղարեւ Չերոյ յոյժ խոնարհ ծառայ թոյ սուրբ եկեղեցւոյն, Կարապետ Յ. Վրդանիսեան: Ի Կալիթայ, ի 24 էփեմբար Կալիթայոյ եւ Չիլոյ Գեորգեան 1861:

ԻՅնա լրագրոյս նախընթաց թիւը:

կառուցութիւն ունենայ, յայտնի է որ Անգղիան և Վաղղիան պատրաստ են քանի մը զօրագունդ յուղարկելու ի նպատակն ի նպատակն (Թոն Թագաւորին) :

Ահաւասիկ մօսիւ Լոնտօնի մէջ գտնուող Վաղղիոյ դպրոցին մէջ զրուցած ամբարիշտ խօսքերը, որ գայթակղութիւն և միանգամայն խռովութիւն պատճառեցին Փարիզի մէջ :

«Անգլոգական մարդ մի և այն աստիճան գերադասեց որ, թէպէտ աստիճան քանի մը քանի մը հաստատուող գիտութեան կանոնացը համեմատ դատուի, չեմ ուզեր դէմ դնել այնպիսիներուն որոնք անոր դարմանալի գործոցը վերայ սքանչանալով Աստուած կանոններն զնա, անգլոգական մարդ մի կրնամ, բարեկարգութիւն ըրաւ հրէական կրօնին մէջ. այնպիսի հիմնաւոր և սեպական բարեկարգութիւն մի, որ չիտակը ըսելով նոր կրօնի մի հաստատութիւն եղաւ ըստ ամենայն մասին :

Փարիզի (Բիլիթ) Լոնտօնի օրագրութեան գրականութիւնը խմբագրին յոգեւածը հետեւեալն է. զոր արժան համարեցաւ հրատարակելու, ինչպէս որ զրուցած եմք մեր Վաղղիական տեսութեանը մէջ :

«Յիշատի, կառավարութիւնը շատ նեղութեան մէջ կը գտնուի ինքնիշխանութեան թէ ոչ միայն հոգ կը տանի կառավարելու Վաղղիոյ նիւթական օգուտները, այլև կը ջանայ ուսուցանելու անոր ճշմարիտ գրաւին և զգարն, ճշմարտութիւնը և միտքը թէ իրեն համար շատ օգտակար կը լըլայ եթէ իւր պաշտօնին հոգեւոր մասէն հրաժարելու ըլլայ : Ինչո՞ւ համար այս հոգեւոր պաշտօնը հոգեւոր սրբազան Վաղղիականութեանը կամ գերադասելու եպիսկոպոսաց չեղողը որ ի գործ գտնուի : Այսինքն ասոնք կրօնական խնդրոց մէջ գտնուի անսխալ զատուութիւն և որոշեալ դաւանութիւն մի ունին : Բայց տէրութիւնը, որ կրօնից ազատութիւնը կը զոհուի, որ վարձք և թոշակ կուտայ հրէական կրօնի և բողոքական կրօնի պաշտօնէից, նմանապէս մահմադական կրօնաւարաց. տէրութիւնը, կըսեմք, միթէ հաւատոյ հանգանակ մի ևս ունենալու միջամտելու պիտի ըլլայ : Միթէ պաշտօնէից ժողովը միտք ունի իւր հաւատամքը հրատարակելու և պարտաւորելու զայն մեքը որ նոյն դաւանանքը ունենան : Չարմանալի բան : Տէրութիւնը մօսիւ Ռէնանի գաղափարները կարգի է, վասնզի Վաղղիոյ դպրոցին մէջ իւր դաստուարութեան ժամանակ խիստ անհամապատասխան կերպիւ, երկբայութիւն մի յայտնեց Քրիստոսի Աստուածութեանը վերայ, այնինչ նոյն տէրութիւնը կը վարձարէ, հրապարակաւ, հրէական կրօնին պաշտօնեաները և անոնց ժողովարաններուն ծախքը կը հօգայ, ուր ռաբբինները կերպարայէս կուսուցանեն զոր

Վերադարձնելու օրինակներն ի վերայ պարտաւորեալ պարունելիքներն :

Իրաւի տիրուր եմ վերն պատասխանին. եթէ դըտած գիրն առ պարունելիքն. Վ. Յ. Վ. քանիտէն՝ առանձին է, ուրեմն չեմք կարող տեսնել. բայց եթէ թուղթն առ եկեղեցական է՝ ամենայն հասարակութիւն ունի իրաւունս տեսանելոյ և պահանջեմք զայն :

(Ձեռնագրեալ) Ռ. Չ. Դեմիտ :

Որոք թուղթ որ գրեալ լինի առ եկեղեցական, ժողովուրդն կարող է պահանջել վասն ներկայացուցելոյ ի ժողովի. այսպէս թուղթ չէ առանձին. մեր եկեղեցական ծառայ է եկեղեցւոյ ի կողմանէ ժողովուրդեան :

(Ձեռնագրեալ) Զ. Մ. Մարտ :

Պարուն եկեղեցական յարմար չհամարեց մեղծանուցանել. բայց արդեօք յիշեալ գիրն զոր ինքն խոստովանի ստանալն՝ ուղղեալ է առ իւրն առանձին թէ իբրեւ եկեղեցական եկեղեցւոյ : Վարձեմայս պատասխանն առ մեր հարցին համեմատութիւն չունի. եթէ այդ գիրն առանձին է՝ ոչինչ չունիմ ասելոյ. բայց եթէ ուղղեալ է առ եկեղեցական սուրբ եկեղեցւոյն, յայնժամ հարկաւոր է նմա իւր պարտականութիւնն ի գործ դնել. վասնորոյ՝ ես լինելով մի ի յայնդաւ մոց եկեղեցւոյ, պարտաւորեմ զինքն զվերջոյ դրեալ

ինչ մօսիւ Ռէնանի հաղորդակի զգուշութեամբ յառաջ բերաւ Վաղղիոյ դպրոցին մէջ : Ինչ հակասութիւն : Եթէ արդեւման և կրօնական անթոյլ տուութեան սկզբունքը նորոգուելու ըլլան Վաղղիոյ մէջ, հարկ պիտի ըլլար ոչ միայն մօսիւ Ռէնանի գիտնականին դաստուարութիւնը արդիւնէ, այլև պէտք էր հալածել այլափառ կրօնները, պաշտօնէից ժողովէն արտաքսել մօսիւ Ռէնանի որ հրէայ ըլլալով մօսիւ Ռէնանի դաստուարէն աւելի նուազ կը հաւատայ Քրիստոսի Աստուածութեանը. վերջապէս պատուել և կտոր կտոր ընել Վաղղիոյ, Ռուսոյի և ուրիշ նոր փիլիսոփայից ամեն գիւղերը : Վասնի մը տարի այսպիսի կարգադրութեանէ ետեւ, կարելի կը ըլլայ յայնժամ միւսմանէ ի Վաղղիա՝ Սպանիոյ այն փրկաւէտ օրէնքը, որուն զօրութեամբ թին (քիւրէք) կը յուղարկուին այն անձինքը, որոնք բողոքականութիւն կը քարոզեն :

Իսթրապոյն Ռուսը հետեւեալ աղբարարութիւնը հրատարակեց :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան կառավարութիւնը ուղեւոր վախճան տալ պատրաստը որ մինչև ցայսօր տեղի ունեցան ազգայնութիւնը փոխելու մասին, խառն յանձնաժողով մը հաստատեց, որուն յատուկ պաշտօնը պիտի ըլլայ քննել զվայսրաբնութիւնները օսմանեան հպատակաց, որոնք օտար տէրութեանց հպատակ եղած են :

Այս յանձնաժողովը, որ Վաղղիայի մեծ մաքսատունը կը ընէ իւր նիւտերը, կը պարապի այժմ ի քննութիւն այն օսմանեան հպատակաց, որոնք Ռուսիոյ անցադիր մը ձեռք բերած են :

Այս կարգի անձերէն ո՞վ որ յիշեալ յանձնաժողովոյն առջև կը յայտնէ թէ կուզէ Ռուսիոյ հպատակ մնալ, երեք ամիս պայմանաժամ պիտի տրուի անոր որ իւր գործերը լմնցնէ և իւր ստացուածքը վաճառէ : Այս պայմանաժամը լմննալէ ետեւ՝ պարտաւոր պիտի ըլլայ միկնելու իւր ընտանեօքը հանդերձ, առանց այնուհետեւ իրաւունք ունենալու վերադառնալ և իւր բնակութիւնը օսմանեան կայսերութեան մէջ հաստատել :

Աստիճան հրամաններ պիտի յուղարկուին ձեռնահաս իշխանութեանց, որպէսզի պարտաւորեն այս կարգի անձինքը օսմանեան երկրէն դուրս ելլելու, իրենց գործը և որոշեալ պայմանաժամը լմննալէ ետեւ, թէև այն ժամանակը միտքերնին եղած ըլլայ օսմանեան հպատակութիւնը վերադառնալու ընդունելու :

Գրութիւն հոշակել ի մէջ հասարակութեան Վաղղի : Յ. Ռ. Դեմիտ (օրէնսդէտ) :

(1) Մեք չունիմք ցանկութիւն առանձին գրութիւնը կարգալայ և տեսանելոյ :

(Ձեռնագրեալ) Գեորգ Լեւի :

Յ. Միտայէ :

Գերապատիւ պարուն կարապետ Յ. Վ. քանիտէն, եկեղեցական :

Մասնատուութիւն իմ որ ի չորից ամաց հետէ հանդերձեալէր հրաժարել ի թեմական պարտաւորութեանց և կապից վիճակիս. նաև ի գործակատարութեանէ սրբազան Առաջնորդին ճշմարտ. այո՛ արդեւմամբ և յորդորմամբ ազգասիրաց ոմանց յետո նահանջեցայ ցայսօր, յորում անաղաւ միջոցաւ պարտաւորեմ յայտնել, զի ներքին և արտաքին գիտարութիւնը ժամանակիս, մանաւանդ և ստեպ ստեպ հիւանդութիւնը անձինս թոյլ չտան ինձ շարունակել զթեմական պաշտօնս եկեղեցւոյ :

Ուստի ակն ունիմ ի պատուելի հասարակութիւնէ, զի բաւական համարեալ զնոնաբջ սպասահարկութիւն

(1) Այո, կարդացող եւ տեսանող քորոյն կրկնելի Գիցակցանար. այլ՝ չիք ինչ ծածուկ որ ոչ յայտ եւ ոչ գաղտնի, որ ոչ ծանցի եւ եկեղեցի ի

Այս գործոյն վրայօք կոստանդնուպոլսոյ Ռուսիոյ գեղարարութեանը և հետեւեալ պաշտօնական ծանուցումը հրատարակեց :

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ կայսերական դեսպանատունը իմաց կուտայ Վոստանդնուպոլսոյ բնակող Ռուսիոյ հպատակաց թէ, համաձայն խորհրդով ի մէջ յիշեալ դեսպանատան և օսմանեան կառավարութեան, խառն յանձնաժողով մի հաստատուեցաւ բարկացեալ Ռուսիոյ դեսպանատան և Ռաբբիոյն Վրան պաշտօնատարներէ քննելու համար ազգայնութեան վկայագրութիւնները, զորս Ռուսիոյ հպատակաց մէկ մասը ստացած են 1853 տարիէ ի վեր : Ո՞վ որ յառաջագոյն օսմանեան հպատակ էր, և որուն ձեռքը եղած այժմեան Ռուսիոյ անցագիրը (բասաբորդ) կանոնաւոր կերպիւ ընդունուած չըլլալը յայտնուի, կրնայ ըստ իւր կամեցողութեան և իւր օգուտը նայելով, Ռուսիոյ հպատակութիւնը ընդունիլ կամ օսմանեան հպատակ մնալ :

Բայց անոնք որ Ռուսիոյ հպատակութիւնը պիտի ընդունին, երեք ամիս պայմանաժամ պիտի ունենան որպէսզի իրենց գործերը կարգադրեն պաշտպանութեամբ և պաշտօնական առաջնակայութեամբ Ռուսիոյ կայսերական դեսպանատան՝ դատաստանալ կան խառն յանձնաժողովոյ մը առջև, որ յատկապէս այս բանին համար պիտի կազմուի : Երանմանայ պայմանաժամը լմննալէ ետեւ՝ և այս երկրորդ յանձնաժողովոյն առած վճիռները կատարելապէս ի գործ դրուելէ ետեւ, Ռուսիոյ հպատակներէն անոնք որ պատճառ տուած են իրենց վկայագրութեանց այս քննութեանը, պարտաւոր պիտի ըլլան օսմանեան կայսերութեան երկրէն ելլելու, և կայսերական դեսպանատունը հոգ պիտի տանի, որպէսզի չըլլայ թէ, որեւիցէ պատճառանօք, այս անօրէնութիւնը ի գրեւ ելլէ :

Իւրա, 1-13 Մարտ 1862 :

Ա. Գ. Ե. Յ. Ն

Հալէպի մեր յարգելի հոգեւորական հայագրի բարեկամներէն մէկը հետեւեալ նամակը յուղարկած է մեզ ի հրատարակութիւն :

Բերիտ, 17 Փետրուար 1862 :

Արժանապարդ խմբագիր Արշալոյս լրագրոյն,

Մերիկ տղերքնու վերաբերեալ ինչեկից ուրախալի լուրերը՝ ձեզի ծանուցանելու անհրաժեշտ և նուիրական պարտք կը համարեմ ինձ. ըստորում ձեր յարգութիւնն ալ լծուա զանց չընէք ազգային բերկրամատոյց լուրերը մեզի հաղորդելու ձեր անդամիկ լրագրոյն միջոցաւ :

Այս օրերս Լիբանանու տրոսնապարդ թղթակցէս զրութիւն մի ստացայ. որուն մէջ այսպիսի պարբերութիւն մի գրուած էր :

«Բարձրապատիւ և վսեմաշուք հայագրի Տոմար վա»

Իմ ութ և տասն ամաց՝ անբասիր կացուցանէ զիս ի հրաժարումս. որոց և մատուցանելով զշնորհալիութիւնս, յօրէ յայտնանէ միամ ազգա ի թեմական պարտեաց, և անդէն ուխտեմ մնալ ի բոլոր սրտէ որպէս միշտ, պատուական կենաց ամենեցուն երախտապարտ աղօթարար :

Ի կալեաթա, 31 Դեկտեմբեր 1861 :

(Ձեռնագրեալ) Խալիլ

Եւր Յ. Կանիկ Խալիլեան :

ԵՄԵՆՈՒՅՈՒՄՆ

Լիցի պատուելի հասարակութեան մերաւնէից զի թուղթ մի ստացաք այսօր ի յարգողապատիւ սրբալիւն տէր Յովհաննիսէ Խաչիկեան՝ յաւադերիցու տեղոյս սրբոյ եկեղեցւոյ մերոյ, զորոյ օրինակն ի վերոյ ունիք տեսանել և տեղեկանալ զրեւոյն ի նմա :

Մնամ ձերոց յոյժ խոնարհ ծառայ

Յաւանդատան Կարապետ Յ. Վ. քանիտէն  
Կապարեթայ Եկեղեցական Կալիկալոյս և  
սուրբ եկեղեցւոյն, Զիւլա՝ առաջ եկեղեցւոյն  
Ի կալեաթա, 2 Հայոց :

Յունուար 1862 :

չան իւր խոհմով ընթացողը և ճարտար կառավարութեամբ ինքզինքը ամենուր սիրելի և յարգելի ընծայած է . մասնաւորապէս իրանաւոր Հայոց ամենապատու կաթողիկոսին համակրութիւնը ըստ արժանւոյն կրկնելով : Յիշեալ բարձրաստիւ պաշտօնատարը կաթողիկոսարանը անգամ մի այցելութեան երթալով խիստ մեծ համարմունք ունեցաւ միաբանութեանը վերայ . վստողի տեսաւ և խնայաւ , որ բայց ի ուրիշ բարեկարգութեանց որովք կըլիային նոյն միաբանութիւնը , աղգային սեփական կան իրաւունքները (որ ուրիշ տեղեր գուցէ ըստ խիւր կորսուած են) թէ՛ ախոռը և թէ՛ անոր վիճակներուն մէջ անարատ պահուած են :

Այս կտորը կարգաւոր միտաւ անպատում ուրախութեամբ լեցուեցաւ . և յիշուի որ Հայոց սիրտ չբերկրիր այսպիսի աւետարներ ըստ մի ընդունած ժամանակը . կամ կա՞յ արդեօք ճշմարիտ աղգանք մը , որ կարողանայ անտարբեր մնալ այսպիսի ուրախութեան հանդէսին մէջ :

Ուրախութիւնս կրկնակի եղաւ նախ՝ վստողի գուշակիցի այն ազդեցող բարօրութիւնները՝ զոր Վերին Հայկաթոսմանութիւնը մեր աղգին կըլսարատեալ չնորհիւ օտմանեան մեծագոր տէրութեան . և նշմարելի այն գեղեցիկ յատկաւորութիւնները՝ զոր պիտի ունենայինք ինքէ մեր աղգայնոց բնատուր գովելի ձիւրերը նոյն վեհափառ կառավարութեան ճանչցուելով , ըստ արժանւոյն վարձատրուելին , ինչպէս արդեամբ տեսնել յանձն բարձրապատու Տառնի վաշտայի : Նորին Վստողութիւնը անշուշտ իւր ունեցած բարի բարի հանգամանքներով տէրութեան համարումը ստանալով մինչև այս վստմ պոշտօնին հասաւ : Ուրախացալ երկրորդ խնամալով մեր աղգին իրանանեան միաբանութեան բարեկարգ վիճակը , որնոր անշուշտ ներկայ Ս . Կաթողիկոսին և իւր խորհրդակից Երուսաղէմացի գերապատու Միքայէլ արքեպիսկոպոսին ջանքերը եղած է : Նոյն արժան կը համարէի համառօտ տեղեկութիւն մը տալ ձեզի այս միաբանութեանը վրայ . բայց ժամանակին անձկութեանը պատճառաւ զանց կընեմ : Այս միայն կը յիշեմ , որ աւանակաւոր Վրիգոր կաթողիկոսը ոչ միայն գիտութեամբ արջառաջեղաւ է , այլև զեղեցիկ նախնայութեամբ կըլսանայ անարատ պահելու նախնայ ծէսերը և հայկական արարողութիւնները ինչպէս ակներեւ տեսնուեցաւ , երբ ժամանակ մի Բերիայի հայազգի հասարակութիւնը հրաման խնդրեց իրմէ , որ եկեղեցւոյ մէջ արարողութիւնները Արարչոց լեզուով կատարուին , որպէսզի ժողովրդեան հասկանալի ըլլան : Բայց յիշեալ ամենապատու սրբազանը վստող պատասխանելով թէ «Ասիկա ըլլալիք բան չէ . վստողի մեծ անխրատութիւն ըրած էր իր ըլլամբ մեր սուրբ նախնայ արարողութեանը , անորքայ լեզուով լեզուով արտաբերելով կամ թէ իրենց ընտելեան հանելով . և ոչ այսչափ միայն , այլև ինչչափ տնտեսիլ է այնպիսի դուռ մի բանալ՝ որով ամենուն ընդարձակ տեսարկը մը բացուի իրենց կամայը համեմատ աղգային լեզուն վստողութեամբ :

Բարձր , ինչ գեղեցիկ զգացմունք է այս և ինչ անմահ յիշատակաց արժանի պատասխան : Եթէ այսպէս չըլլար , անշուշտ Բերիայի ոչ երբեք հոգ պիտի ունենային դուրս մի բանալու , իրենց մանկունքը հայկաբանութեան ունեանց մէջ կըլիկու համար :

Ահա այս վստողութիւններն են , որ խիստ ուրախութեան պատճառ եղան . և պատշաճ պատեցին ձեր յարգութեանն ու հարգողը , ապահով ըլլալով որ ձեր անկեղծ աղգանքը սիրտը կը հրճուի այսպիսի լուրերէն . ու այլևայլ դիտմամբ կամ ի շնորհս նախապաշարից ամանց ոչ երբեք կըլլանայ իւր բարեկամին միջոց մը՝ որուն մէջ իւր հրապարակական ուրախութիւնը պիտի յայտնէ , աղգային ուրախութիւնը դիպուածի մը պատճառաւ :

Մտերիմ ձեր

Համեմատ հայազգի երկրասարք ճը :

Յայտնի է հասարակութեանը , թէ Կոստանդնուպոլսոյ Հայոց մէջ պատահած աղգային ցաւալի երկպառակութեանց վստման մը տալու համար , օտմանեան բարեխնամ կառավարութիւնը արժան համարեցաւ , մարդասիրաբար , Յանձնաժողով մի կազմել բաղիսցեալ աղգին գլխաւոր և արժանայարգ անձինքներէ : Այս Յանձնաժողովը՝ որ Բարձրագոյն Ղուբը կընէ իւր նիստերը , կայսերական կառավարութեան հրամանացը համեմատ աղգային կանոնադրութիւն մի կամ Վահանադրութիւն մի շարադրելով՝ արտաքին գործոց բարձրապատու պաշտօնէին աջաց առջև դրաւ ամենախոնարհաբար :

Կայսերական կառավարութիւնը՝ զինի քննե-

լոյ և արժան համարած սրբաբնութիւնը ընէլոյ , նոյն կանոնադրութիւնը նորէն յիշեալ Յանձնաժողովոյն տուաւ հրաման ընելով որ իւր ըրած փոփոխութիւնները աչքէ անցնէ , և եթէ անոնց վրայօք դիտողութիւն մի ունի ընելու , շուտով խնայել իրեն :

Յանձնաժողովը՝ Բարձրագոյն Ղուբը ըրած փոփոխութիւնները աչքէ անցնելու և քննելու համար քանի մը անգամ ի ժողով գումարուեցաւ և անոնց վրայօք մէկ քանի դիտողութիւններ ըրաւ . զորս կայսերական կառավարութիւնը յոժարամիտ ընդունեցաւ : Վերջապէս Յանձնաժողովը անցեալ ամսոյ 16ին իւր ստորագրութիւնը դնելով յիշեալ աղգային կանոնադրութեան կամ սահմանադրութեան ներքև ներկայացոյց զայն կայսերական կառավարութեանը՝ որ յատուկ հրամանագրով մը պատուէր յուղարկեց Հայոց պատրիարքարանը , որպէսզի հրաժարեալ սրբազան Սարգիս պատրիարքին օրով եղած աղգային ընդհանուր ժողովոյն մէջ գտնուող երեսփոխանները և կղերական անդամները հրաւիրուին և ընդհանուր ժողով մի գումարուին : Այս ժողովը՝ իւր անգամաց մեծագոյն մասին հաճութեամբ ընտրուած յանձնաժողով մի կազմէ բաղկացեալ եօթը հոգի և այս յանձնաժողովին պաշտօնը , ըստ տնօրէնութեան կայսերական կառավարութեան պիտի ըլլայ , աղգին կողմանէ քննել զյիշեալ կանոնագիրը և անոր վրայօք իւր դիտողութիւնները (եթէ ունի) ներկայացնել Բարձրագոյն Ղուբին :

Փետրուարի 20ին երեքշաբթի օրը , կայսերական կառավարութեան հրամանագրոյն տնօրէնութեանցը համեմատ , աղգային ընդհանուր ժողովը գումարուեցաւ և գաղտնի քուէարկութեամբ հետեւեալ եօթը արժանայարգ անձինքը ընտրուեցան .

|                                 |    |
|---------------------------------|----|
| Սրբանեան Ստեփան-Պէյ             | 92 |
| Սրբանեան Սրբան Էֆէնտի Օմրուշայի | 88 |
| Սրբան Սրբան աղա                 | 82 |
| Սրբան Սրբան Էֆէնտի              | 79 |
| Սրբանեան Նահապետ Էֆէնտի         | 76 |
| Սրբանեան Յոհաննէս աղա           | 71 |
| Սրբանեան Ս . Սրբան աղա          | 60 |

Այս մեծագոյն եօթը անձինքը , որոնք խիստ արժանաւորութեամբ ստացան զվստահութիւնը երեսփոխանական աղգային ընդհանուր ժողովոյն՝ աղգին կողմէն դրուելու Յանձնաժողովոյն անգամ հրատարակուեցան և անոնց անուանց ցուցակը անմիջապէս Ս . Ղուբը յուղարկուեցաւ :

Այս գործը լմննալէ ետեւ , աղգային երեսփոխանական ժողովոյն ատենապետ մեծագոյն Սրբան Էֆէնտին հետեւեալ բացատրութիւնները տուաւ կայսերական կառավարութեան՝ Հայոց համար սենեցած բարեխնամ աղգանքները վրայ :

«Աղգ Սահմանադրութիւն մի շինել էր և ժամանակ մը ի վեր ի գործ կըլնէր : Բայց հայտնակ ժողովրդեան մի վերաբերեալ կանոնադրութիւնը պէտք է որ տէրութեան կողմէն վաւերացած և հաստատուած ըլլայ : Տէրութիւնը՝ այս պահանջութեան պատճառաւ աղգին մէջ յառաջ եկած երկպառակութիւնը տեսնելով , իրեն վստահութիւնը ունեցող անձանց միջոց յանձնաժողով մի կազմեց , պաշտօն տալով անոր որ , թէ՛ Յունաց աղգին տրուած կանոնագիրը և թէ՛ աղգին գործադրած սահմանադրութիւնը քննելով՝ աղգին յարմար և տէրութեան ընդունելի կանոնագիր մի պատրաստէ : Իսկէ որ Յանձնաժողովոյն պատրաստած Սահմանադրութիւնը ուրիշ բան չէ , եթէ ոչ աղգին գործադրած Սահմանադրութեան վերաքննութիւնը : Տէրութիւնը՝ Հայոց աղգին վրայ ունեցած հայրական խնամքէն շարժեալ ուղեց որ , ոչ միայն կանոնադրութեան հիմնական ըսկզբանցը մասին , այլև անոր ամեն պարագաներուն մասին ալ աղգը գոհ ըլլայ : Եւ որ համար այս յանձնաժողովը կուզէ աղգին . որուն պաշտօնը պիտի ըլլայ , յիշեալ կանոնադրութեան վրայ ունեցած դիտողութիւնները աղգին կողմէն ներկայացնել Բարձրագոյն Ղուբին :

Իւր խօսքը լմննելէ ետեւ , ատենապետ Էֆէնտին առաջարկեց ժողովոյն , որ ընդհանուր

աղգին կողմէն շնորհակալութեամբ քուէ մը տրուի կայսերական կառավարութեանը : Այս առաջարկութիւնը միաբան հաւանութեամբ ընդունուեցաւ , և բոլոր ժողովականք փութացին ջերմեռանգ բարեմաղթութիւններով իրենց երախտագէտ աղգանքները յայտնելու :

Յետ այսորիկ մեծագոյն ատենապետ Էֆէնտին հետեւեալ խոհական աղգարարութիւնը ըրաւ երեսփոխանական ժողովոյն :

«Ըրդ ինչպէս որ աղգը վստահութիւն ունի ձեր վրայ , դուք ալ պէտք է որ ձեր ընտրած յանձնաժողովոյն վրայ վստահութիւն ունենաք : Ստիք պէտք է որ , սա երեք սկզբունքը ապահովելով՝ այն է՝ հաւատարմութիւն առ կայսերական կառավարութիւն , անխախտ պահպանութիւն աւանդութեանց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ և ապահովութիւն աղգային երեսփոխանական իրաւանց , ուրիշ բոլոր պարագայից վրայ դիտողութիւն ընելու իրաւունք ունենան , և ասոնց ըրած դիտողութիւնները ձերը պիտի համարուին , ինչպէս որ ձեր վիճիւններն ալ աղգինը կը համարուին և աղգինը են :

Կոստանդնուպոլսէն կղերներն մեղ թէ , համապատասխան Բարեգործական Բնկերութիւնը , որ աղգին վստահութիւնը և համակրութիւնը իրաւամբ ձեռք բերած է , օրըստօրէ կը յառաջագիծէ և իւր դրամագրութեամբ աւելնալու վրայ է :

Ինչեալ շարժու Միջազգի Հայոց Թատրոնին գերասանաց խումբը՝ Բերայի Երեւելեան Թատրոնին մէջ հայերէն պատուական ողբերգութիւն մի ներկայացուց ի նպաստ Բարեգործական Բնկերութեան : Թատրոնը լեցուն էր հանգիստականներով , որոնք թէ՛ աղգասիրութեան շարժեալ և թէ՛ պարզապէս զբոսնելու համար չափազանց բազմութեամբ եկան էին : Հայկազուն գերասանները և գերասանահիւները խիստ յաջողութեամբ կատարեցին իրենց յարաբերական պաշտօնները , և հանգիստատենները սոսկ ծաղիկահարութեամբ և մանաւանդ առատանուէր տուրքով յայտնեցին իրենց գոհունակութիւնը : Քանզի այն գիշերուան արդիւնքը այնչափ շատ եղաւ , որ Թատրոնը թատրոնի ամեն ծախքը ելլելէ ետեւ , 20 հազար զուգուշի չափ ալ ռուբլեցաւ ի նպաստ համապատասխան ընկերութեան :

Սոսկուայէն Հաբաշէի Ռոսիոյ անուն հաշիւէն ըրագրոյն Յունուարի 20 թուոյն մէջ հետեւեալ յօդուածը կըլարգամբ :

«Տփլիսէն ունիմք քանի մի լուր : Սրբազան Սարգիս արքեպիսկոպոսն զնայեալ է յիշմարտին վեհափառ Կաթողիկոսի հրամանաւ՝ ելանելով առաջնորդական պաշտօնից : Առաջնորդ Սրբանեան և Իմերէթի նշանակուած Սրբան երկրորդ անգամ սրբազան Սահար արքեպիսկոպոսն : Իսկ ուսումնարանի կառավարութեան վերայ հաստատ անդեկութիւնը չունիմք :

Սուրբ Սրբանեան և Տփլիսէն հասած վերջին նամակները գովութեամբ և գոհունակութեամբ կը յիշատակեն վեհափառ տէր Ստեփանոս սրբազանսրբ կաթողիկոսին աղգասիրական անխնայ ջանքը , զոր ի գործ կըլնէ միշտ ի բարեկարգութիւն աղգային հոգեւորական և ուսումնախնդրական հաստատութեանց :

Կըլսեմք որ Սրբան Սահարայութեան հայրական քաջալերութեամբ և բարեխնամ վերապատեցութեամբ թէ՛ Սրբանեան , թէ՛ Սրբանեան , թէ՛ Սրբանեան մէջ գտնուած Հայոց վարժարանները , որչափ որ կարելի է , կը յառաջագիծեն և օրըստօրէ նորանոր բարեկարգութեամբ կըլայծանան ըստ ներքոյ պարագայից ժամանակին :

Վստողոյ , Օմրուշայի հայազգի ողջամիտ հասարակութիւնը , որ մեր Ստուածապատու սրբազանսրբ կաթողիկոսին հայրական խնամքները ի մօտոյ վայելած է երբ Սրբան վեհափառ Սրբանեան Սրբան (որ յայնժամ արքեպիսկոպոս միայն էր) վիճակիս հոգեւոր առաջնորդութեան պաշտօնը կը վարէր , Օմրուշայի Հայոց հասարակութիւնը , կըլսեմք , ուրախ սրտով կը փոռ

Թայ իւր որդիական ջերմեանդ խնդակցութիւնը  
և իւր երախտագէտ զգացմունքը, ամենախո-  
նարհաբար, յայտնել Ղորին սրբազնակատար  
Վեհափայլութեանը :

Հետեւեալ նամակը յուղարկեցաւ մեզ 'ի հրատա-  
րակութեան :

Առգր. խմբագիր :

Իզմիր, 6 Մարտ 1862 :

Կրթնդրեմ հրապարակաւ հրատարակել որ Վասպու-  
րական ընկերութենէ հրաժարականս տուած եմ, և սոյն  
ընկերութեան վերաբերեալ թէ դաշնագրութեանց և թէ  
որիւր որեւից թղթոյ մէջ, որքան որ Կարապետ Հա-  
ւան ստորագրութիւն ունիմ՝ ոչինչ սեպուած եմ :

Կարապետ Տէրէման

Մակնատանեալն Հաւան :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈԼԻՍ • 7 ՄԱՐՏԻ

Թէպէտեւ օսմանեան փոխառութեան վրայօք տա-  
կաւին ճիշտ լուրեր չունիմք, բայց կը հաստատեն  
թէ դործը յառաջ երթալու վրայ է և թէ յատուկ  
խորհրդով դադարի կը պահեն անոր պայմանները,  
որպէսզի այս ձեռնարկութեան յաջողութիւնը աւելի  
ապահով ըլլայ :

Կայսերական հրովարտակաւ, օգոստոսիան Սուլ-  
թանին նախորդ երրորդ խորհրդոյ քարտուղար Վի-  
ղայը՝ Կիւրոսի կառավարիչ կարգեցաւ և այս առ-  
թիւ Միւրիմիւրանի աստիճան ընկալաւ :

Պէշկապատի նախորդ կառավարիչ Սուրբիտ փաշան՝  
Հէրսէքի կառավարիչ անուանեցաւ :

Հայկազուն պարոն Սոֆիալը յարգոյ երիտասար-  
դը, որ Բէգէրսպուրի օսմանեան դեսպանատան  
առաջին խորհրդոյ քարտուղար էր, և Ռ. Դրան ընդ-  
հանուր հիւպատոս անուանեցաւ 'ի Տփլիս(1) :

Քառաձա իշխանը, որ Յոյն է ազգաւ, Դուրի-  
նայի օսմանեան դեսպանատան առաջին խորհրդոյ  
քարտուղար անուանեցաւ :

Անցեալ ուրբաթ օրը վեհափառ Սուլթանը եր-  
րոր Պատիւներն իւր փառաւոր նաւակաւ կանցներ,  
Դադղիոյ տէրութեան Ռաշա անուն գործէն իւր  
մեծ կայմին վերայ օսմանեան դործը բարձրացնելով՝  
21 թնդանօթ արձակեց, նաւատիրները առաքատա-  
կալներուն վրայ հանել տուաւ և ուրիշ քաղաք-  
վարական ցոյցեր ըրաւ : Կըսուի թէ 'յորին Վե-  
հափառութիւնը 'ի նշան իւր բարձր գոհունակութե-  
հետեւեալ օրը քթախոտոյ աղամանդեայ շքեղ տուփ  
մի յուղարկեց յիշեալ գործէն հրամանատար մօ-  
սիւ Տիւրքերէ սեպուհին :

Վալաթիայի և Բերայի մէջ այս օրերս Յունա-  
րէն տետրակ մի կը շրջանդուրէ : Այս տետրակը  
Յունաստանի ապստամբութիւնը կը պաշտպանէ և  
նախառաջիկ զաղիր խօսքերով կը պախարակէ Օթման  
թագաւորը և իւր կառավարութիւնը :

Մոսթաթէն հասած լուրերը կը ծանուցանեն  
թէ Սէրասիւրի Լաթիֆ Լաթիֆ փաշան Ռովզէ մտեր է  
յաղթութեամբ, որ Գառնատաղի սահմանաց մօտ զօ-  
րաւոր դիրք մըն է :

Իբրաննու կառավարիչ Տուրք փաշան, կըսէ  
Քաթիբ Կաթիբ լրագիրը, իրեն խորհրդոյ քա-  
տուղար ընտրել է գաղղիացի զորագէտ մի մօսիւ  
Լանժաք անուն, որ փարիզի Լաթիֆ օրագրոյն խմբա-  
գիրներէն մէկն է :

Լոթթը հոգիէ բաղկացեալ ազգային (Հանձնաժո-  
ղովք) կը լսեմք թէ քանի մը անգամ գումարուեր է,  
Բարձրագոյն Դռնէն առաջարկուած կանոնագիրը  
քննելու համար : Յոսամք թէ շուտով իւր ծանր  
պաշտօնը խղճի մօտք և արդարութեամբ 'ի գործ  
դնելով, յիշեալ ազգային կանոնագիրը կամ Սահմա-  
նագրութիւնը շատ չանցած կը հրատարակուի յու-  
րախութիւն սրտի բոլոր ճշմարիտ ազգասիրաց :

Օսմանեան կառավարութիւնը հետեւեալ տուրքը  
հաստատեց ձեռնու համար :

Կառք քաջօղ ձիերը, իւրաքանչիւրը ամիսը 30  
ղուռուշ տուրք պիտի վճարէ : Նստելու ձի՝ ամիսը  
10 զուռուշ, և 5 զուռուշ ամսական պիտի վճարուի :

(1) Այս լուրը Քուրիէ Եօրիան քաղաքոյն 616 քիւսէն  
առնելով կը հրատարակեմք : Բայց Մասիսը կըսէ քի  
Քերթի Եփեսոսին է որ Տփլիսի օսմանեան դեսպան  
կարգուած է : Այս տեղեկութեանց մըր ճիշտ ըլլալը  
'ի հարկէ չունտով պիտի իմացուի :

ամեն մէկ ձիւ համար, որ վաճառք, մարդիկ և ու-  
րիշ բան փոխադրելու կը գործածուի :

ՔԱՆԱԶԱՆ ԵՄԻՆԻՔ

Ձմիւռնիս, 10 Մարտ :

Մանոյս 15-ն մարտի նոր կարգադրութիւնը սկսաւ 'ի  
գործ դրուիլ : այսինքն օսմանեան վաճառքները որ մինչեւ  
ցայսօր 12 առ հարիւր մարս կը վճարէին, այսուհետեւ մի-  
այն 8 առ հարիւր պիտի վճարեն : և այս գինն ալ տարուէ  
տարի հարուրին 1 պիտի նուազի, մինչեւ որ օսմանեան  
վաճառաց մարսը հարուրին մէկի իջնէ : Իսկ օտար երկիր-  
ներէն թուրքաստան յուղարկուած վաճառքը, որոնք  
մինչեւ ցայսօր 5 առ հարիւր մարս կը վճարէին, յետ այսու  
րիկ հարուրին 8 պիտի վճարեն :

Իտալիոյ վեհափառ Վիքթոր — Եմմանուէլ թագա-  
ւորին ծննդեան տարեդարձը ամառայ 2-ին փառաւոր հան-  
դիսիւ կատարեցաւ : Մեծաշուք մօսիւ Պ. Պէրիօ հիւ-  
պատոսը նոյն օրը առաւօտուն թուրք խաղաղացոյ ջերմե-  
անք խնդակցութիւնը ընկալաւ պարագայիս յարմար  
համաձայն ատենախօսութեամբ մի :

Այն հիւպատոսարանները՝ որոյ տէրութիւնները ծանց-  
ցած և ընդունած են այս նոր թագաւորութիւնը, ար-  
տուանէ իրենց դրօշները բացած էին :

Նոյն օրը երկրորդ, քաղաքիս մեծ թատրոնին մէջ ի-  
տալացիները երաժշտական շքեղ հանդէս մի կատարեցին  
'ի պատիւ օտոնախմբութեան, և ուր բազմաթիւ հանդի-  
սատեք ներկայ գտնուեցան :

Երկուշաբթի դիւր ժամը 9-ին ըստ երադարացոյ  
Յոյն մակնաւոր մի Հայոց թաղին քով ատրճանակաւ  
զարկաւ և սպաննեց ուրիշ Յոյն մի, որ նմանապէս մա-  
վաճառ էր : Մարդասպանը՝ որ կերէի թէ մանուկ  
թշնամութիւն ունէր՝ իւր սպանած անձին վրայ, տա-  
կաւին չընծուցաւ : Թէպէտեւ ոստիկանութիւնը ամեն  
կերպ հետաքննութիւնները 'ի գործ դրած է յիշեալ եղիւ-  
նագործը ձեռք ձգելու համար :

Եւրոպիայի, այսինքն թուրքական ազգագրութեան  
մի կը ծանուցանեն մեզ : Այս քաղաքին հայազգի բնակ-  
չաց մէջ առեւտրական ընկերութիւն մի կազմուել է,  
բաղկացեալ 23 անդամներից : Իւրաքանչիւր անդամ կամ  
ընկեր՝ 200 օսմանեան լիւր, դրամագլուխ պիտի դնէ :  
որով ընկերութեան դրամագլուխը 5000 օսմանեան լիւր  
պիտի ըլլայ : Այս դրամագլուխը յիշեալ ընկերութիւնը  
շաբաթի գործարան մի պիտի բանայ Եւրոպիայի մէջ :  
ուր շատ ճանդեղ (փանձար) գտնուելով, տարակոյս չկայ  
թէ ընկերութեան նպատակը յաջողութեամբ պիտի սրա-  
կուի, եթէ միաբանութեամբ և սիրով յարատեւ է իւր շա-  
հարի բանիցը մէջ և իւր ձեռնարկութեան առջի դրժ-  
ուարութիւններէն չվճարի :

Կըսեմք թէ այս նորահաստատ առեւտրական ընկե-  
րութիւնը արդէն գրեթէ 'ի Կ. Պոլիս : որպէսզի իւր  
բանալու գործարանին համար հարկաւոր եղած հրամա-  
նագիրը խնդրուի Բարձրագոյն Դռնէն :

Արեւմտեւորիայի կըզրեն թէ Եւրպատի ընդհա-  
նուր կառավարիչ Բարձրագոյն Սոյիտ փաշան դիտա-  
ւորութիւն ունենալով երկու միլիոն լիւր փոխառութիւն  
ընել 'ի Լոնտոն, հրաման խնդրեց օգտատարու Սուլթա-  
նին : որ բարեհաճել է իւր կայսերական հաճութիւնը  
չնորհելու այս փոխառութեամբ համար :

Բարաքիս սահմանադրական Միութիւն անուն գը-  
րական հանդիսին Մարտի 1 թուոյն մէջ հետեւեալ բերի-  
լալի յօդուածը կը կարդային :

« Եւրոպայի մէջ եկած նամակները գոհացուցիչ լուրեր  
կը պարունակեն ուսման և բարեկարգութեան յառաջաց-  
ման մասին : Մեծարգոյ և ուսումնական Պ. Յովհաննէս  
Միլլա Վանանդեյին՝ որ տնօրէն և դատաւոր կարգուած  
է յիշեալ Վանոյ, մեծ խնամք և հոգ կը տանի զայն ու-  
սումնականութեան և յառաջադիմութեան մէջ դարգա-  
ցնելու » :

Յոնաստանէն հասած վերջին լուրերը կը ծանուցա-  
նեն թէ թագաւորական զօրքը՝ աստիկ պատերազմէ մը  
ետեւ, Անարոլի առջեւ եղած ամրոցներուն տիրեց : Ա-  
պրտարները՝ որ խեղճ վիճակի մէջ կը գտնուին, բերդին  
մէջ սպաստանուած են ու զինադադարում և անյիշատի-  
րութիւն կը լինողին : Սիրայի սպաստանութիւն ևս  
շուտով զարկուցաւ քանի մը հարիւր զօրքով, զոր կա-  
ռավարութիւնը յուղարկեց և բարեկարգութիւնը վերա-  
հաստատուեցաւ յիշեալ կողմէն մէջ :

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Էֆեն Գառնիսարի, Գոնիայի, Պրուսայի,  
Իշթիւրի, Մանիսայի (Մարուխան) ներկայ տարւոյս

տասնամորդները (Էօշիւր) ծախու են :

Գնոյ առնելու կամք ունեցողները հրաւիրեալ են  
Պէշկապատի օղլու Յակոբ աղային հետ տեսնուիլ, որուն  
միայն յանձնուած է այս վաճառութեանը ընել և  
անոնց պայմանները ծանուցանել խնդրուց :

Մեծարգոյ Պէշկապատի օղլու Յակոբ աղան Կ. Պոլիս  
Լաթիֆ Էֆենի խանը թիւ 3 սենեակը կը բնակի :

ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ



Հարգելի Գեղարքունիք :  
Ինչու համար հիւանդութիւնները աղետալ  
փախճան կուենան :

Վանդի փոխանակ անոնց պատճառը ուշադրութիւնը հա-  
տուցանելու, անոնց արդիւնքը կը ընենք : և փոխանակ ուշադ-  
րութեան արմատը քննելու, միայն հետեւեալութեանց հոգ կը տա-  
նիմք : Հոլոտէյի դեղահատիկը ներգործութիւնը կատարեալ-  
ապէս այս դրութեան հաշտակ կերպիւ կազմէ : այսինքն մար-  
մէնց գաղտնի գործարաններէն և արեան շքաբերութեանէն  
կատարեալ ակտաբեր և փնտաւար նիւթերը, որոնք բորբոքու-  
ցաւ, ջերմ, թուրութիւն և ֆիզիկական նուազում կը պատ-  
ճառեն : և այս կերպիւ հիւանդութեանց աղբիւրը ջնջու-  
ով, անոնց հետեւեալութիւններն ալ անբերելի կը լինեն : Սո-  
վորական դեղերը ժամանակաւոր աղէկութիւն մը միայն կը  
պատճառեն հիւանդին, իսկ այս դեղահատիկը, ընդհանուրա-  
յն յարմարաց անտի կը ջնջեն գիւնապատութիւնը :

Վատառողջութիւնը սովորաբար յառաջ կը գալ ջնջի  
անկարգութիւններէ : որոնք արտի գործողութիւնը կը վարա-  
կեն և մեր կենդանական բոլոր կարգը ամենը մէկտեղ կը դնեն  
Արդ՝ այս պատուական դեղահատիկը ջնջի գրութիւնը (սիւ-  
թեմ) կը վերահաստատեն թէ և աւելուած ըլլայ, առողջու-  
թիւնը և միտքը կը զօրացնեն այսպիսի դեղաբերութեան մէջ ու-  
միւս ամեն դեղերը բան մը չեն կրնան ընել :

Իւրիչի հիւանդութիւն և մաղձ :  
Իւրիչ (գառա ճիւղ) հիւանդութիւնները և մաղձը շատ  
անգամ ամենաառաջիկ ցաւեր կը պատճառեն : Որպէս անձին  
արդեօք այս ցաւով վատեցաւ ըլլալով, չեն գիտեր բժշկու-  
թու միջոցները, որոնք իրենց մօտը կը գտնուին : Եթէ այս դե-  
ղահատիկը քանի մը հատ անուր ըլլային, ինչպէս որ նշա-  
ակուած է իւրաքանչիւր ծանուցագրին մէջ, շուտով պիտի  
աղատուէին իրենց ցաւերէն : Զիւնադութիւններէն շատերը  
որոց եւթակայ է մարդոյ մարմինը, կրնան բիւ ժամանակաւոր  
մէջ ջնջուիլ այս դեղահատիկը գործածելով : Ինչպէս որ ասոյ  
զուտուեցաւ բազմաթիւ քննադէմքով :

Վատառողջութիւնը փամփայտելու :  
Եթէ կանայք հոգ չեն ըստ ժամանակին դարման տաճեա-  
լայ թանձր և փնտաւար հիւանդութեանը երբ որ անոնց ըն-  
կեն զաղքած է, իրենց առողջութիւնը և կեանքը իսկ  
հոնցով կը շուրջ կը տարուի իրենց հեղեղէ մը : Այս ամեն փո-  
քաւոր անտիկ հաստատուն գարմանը Հոլոտէյի դեղահատիկն  
են և այս դեղիմիտի կանայք կրնան իրենց փամփայտելու ժամա-  
նակը (սօք քրիթիթ) ապահովութեամբ անցընել և իրենց առող-  
ջութիւնը վնասել : Այս դեղահատիկը օգտակար են նա և կանայք  
վերաբերեալ ամեն հիւանդութեանց և խոցաւթեանց որ կը պա-  
տճառեն կատարեալ հաստիւն մէջ :

Զղացաւութիւն և տկարամտութիւն :  
Հարաւոր անձինք զոհ կը ընեն այս տեսակ սեւեռաւթեան  
փառքներին, որ անոնց տալու առջեւ հրէշի մը ձեւ կը ստան-  
նան : Երբ իրենց ցաւերը թեթեւեղան հարկաւոր գարմանը, այն  
ինչ այսպիսի դեղաբերութեան մէջ Հոլոտէյի դեղահատիկը շատ ան-  
գամ մեծ ներգործութիւններ ունեցան : Ուստի շարունակ գոր-  
ծածութիւնը այս պատուական դեղահատիկը հարկաւոր զգուշ-  
ութեամբ 'ի կրակաւոր և խոցի կը զգնէ ամենամեծ դեղաբե-  
րեցաթի և հիւանդ ըլլան : Ուրեմն ջնջի գրութիւնը (սիւթեմ)  
հիւանդարտի և հիւանդ գարմանը իւր առողջութիւնը կը տառա-  
յն : Այս դեղահատիկը յառաջադիմ և խիստ օգտակար են վա-  
յստապալ հիւանդութեանց :

Ընդհատական ջերմք (Ֆիւրէ կը թուի թիւ 3) : Ընդգե-  
լութիւն (սիւթեմ) : Մաղձային ջերմք (Ֆիւրէ պիւթեմ) :  
Խիւթ (քրիթ) : Ցաւք որովայնի : Թուրութիւն և նուա-  
զում ուժայ : Օձիկ (Էրանձը) : Կանայք ամսական օրինաց  
անկարգութիւններ : Ունեցաւութիւն (նիգրիս) : Գլխացաւու-  
թիւն : Բորբոքեմ : Գալակն (սարքը) : Երկհանձնածեւո-  
թիւն : Տեւատեւութիւն (մայարը) : Զօրացաւութիւն  
(բիւնաւթիւն) : Միգրադութիւն (սիւթեմ) : Գալակն (սարքը) :  
Կամ խիւթ միգրացիոյ : Ուրեմն (գիւնթիւ) : Կեղք (իւնթիւ) :  
Ամեն տեսակ որդերը (սոցուլէն) : Արդեօք տեսան ակտերը :  
Այս դեղահատիկը, որ կը ջնջուին զանոնք գտնուին անձ-  
նական վերակացութեամբ, անոր ընդհանուր գործարանաց  
մէջ կը ծախուին 'ի Լոնտոն Սթրէթի կողմէն թալը թիւ 244  
և 'ի Նոր Իսթը Մայիսէն Լէն թալը թիւ 80 : Իսկ ուրիշ եր-  
կիրները և իւր գործակալաց քով կը ծախուին : որոց անունները  
հետեւեալներն են : Իզմիր՝ Իւսթ Էֆենի, և մօսիւ Բէ-  
թիւրէ, որ ֆարմատի աղանաւ անուն դեղապատեալ խանութի  
տէրն է : Կ. Պոլիս՝ Ա. Սիւրմա և Փ. Տէրտուտա : Ա.  
անդրիւս՝ Փ. Բէրքի, Իսթայի Կալաթի, Բիւս կըզնի՝ Ճ.  
Սիւրմալի, Մալմա՝ Է. Սիւրմա, Պաթիւրէ՝ Էրիսա Վալ ցա

Իսթայի տէր լրագրոյ :

Ղոլա Գ. Պալարաբեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԿԱՆՈՒՄՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ